# ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ և ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

# Fundamental Principles of the Red Cross and Red Crescent International Movement

**Մարդասիրություն**
Humanity

**Անկողմնակալություն**
Imartiality

**Չեզոքություն**
Neutrality

**Անկախություն**
Independence

**Կամավորություն**
Voluntary service

**Եզակիություն**
Unity

**Համընդհանրություն**
Universality

RED CROSS RED CRESCENT

the *power* of **humanity**





Արդեն 93 տարի է, ինչ Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է իր առաքելությունը, այն է՝ նվազեցնել բնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ և ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

Մեր հիմնական նպատակն է կանխել ու թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, հոգևոր, դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից:

Այս տարեկան զեկույցում տեղ են գտել հաշվետու տարվա մեր գործունեությունն ու ձեռքբերումները: 2012 թվականին Ազգային ընկերությունը շարունակել է իր լայնածավալ գործունեությունը սոցիալ-առողջապահության, աղետներին պատրաստվածության և արձագանքման, բնակչության տեղաշարժի, առաջին օգնության հիմունքների, որոնման և ընտանիքների վերամիավորման, Կարմիր խաչի հիմնարար սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածման, երիտասարդական և այլ ուղղություններով: Չնայած դժվարություններին՝ մենք ջանքեր չենք խնայել՝ խոցելի խավերին աջակցելու մեր բազմաթիվ ծրագրերը կյանքի կոչելու համար:

Առիթն օգտագործելով, մեր շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նվիրյալ կամավորներին ու բարերարներին, որոնց շնորհիվ իրականություն են դառնում մեր ծրագրերը:

Այսօր՝ 21-րդ դարում, մարդկությունը արհավիրքներին, պատերազմներին ու ճգնաժամերին դիմակայելու լուրջ մարտահրավերների առաջ է կանգնած:

Աշխարհում տիրող այս քաոսում հաճախ մոռացվում և անտեսվում է մարդը:

Մարդասիրությունն է, որ պետք է լինի աշխարհի շարժիչ ուժը:

Այստեղ յուրաքանչյուր ոք իր անելիքն ունի:

It is already 93 years, that the Armenian Red Cross Society carries out its mission to reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity, to be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population and to provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

Our primary goal is to prevent and alleviate human suffering, regardless of nationality, race, gender, religious, class affiliation and political views.

Our activities and achievements throughout the reporting period are represented in this annual report. In 2012 the National Society continued its large-scale activities in the spheres of health and social care, disaster preparedness and response, population movement, first aid skills, tracing service and family reunion, dissemination of humanitarian principles and values, Youth, etc.. Despite the difficulties, we spared no efforts to bring to life large number of projects to support vulnerable groups.

We express our gratitude to all the dedicated volunteers and benefactors, whose efforts make our projects possible.

Today, in the 21st century, humanity faces serious challenges, such as huge disasters, wars and crises.

In this chaos, human being is often ignored and forgotten.

Humanism should be the driving force of the World.

Everyone has it's role here.

Մխիթար Մնացականյան
Նախագահ
Mkhitar Mnatsakanyan
President

Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար
Anna Yegiazaryan
Secretary General



**Հայկական Կարմիր Խաչի Ընկերությունը** (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին Սպանդարատ Կամսարականի կողմից:

**The Armenian Red Cross Society** (ARCS) was founded on March 19, 1920 by Spandarat Kamsarakan.

**ՀԿԽԸ կայացման ուղին**

Կարմիր Խաչն իր մարդասիրական առաքելությունը Հայաստանում սկսվել է 1877թ., երբ Ֆիննական Կարմիր Խաչի դաշտային հոսպիտալները հիմնվեցին Էրիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր Խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն ցուցաբերեց Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ տառապող հայ բնակչությանը:

**Review of ARCS foundation**

The Humanitarian Mission of red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Osmanian Turkey.

| | | |
|---|---|---|
| ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը | **1920** | The Parliament of RA ratified the Statutes of ARCS |
| ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը | **1921** | The activities of ARCS were resumed after temporary cancellation |
| Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը | **1922** | The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic |
| ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ | **1925** | ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR |
| ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր Խաչի միակ ազգային ընկերություն | **1992** | ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS |
| ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը | **1992** | “Gratsia” International Rehabilitation Center of ARCS was established in RA |
| ՀՀ միացավ 1949թ. Ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա 1977թ. առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին | **1993** | RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977 |
| ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ Նախագահի հրամանագրով | **1993** | ARCS was recognized by the RA President’s statement |
| ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն | **1995** | ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society |
| ՀԿԽԸ դարձավ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ | **1995** | ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member |
| Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը | **1997** | ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ներկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2001** | ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly |
| ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը | **2002** | The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems |
| Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ | **2003** | ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva |
| Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul |
| Ավստրայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ | **2005** | ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria |
| Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում | **2006** | ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens |
| ՀՀ միացավ Ժնևի կոնվենցիանեի 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը: | **2011** | RA ratified the third Protocol to Geneva Conventions of 2005 |

## ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

## Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, հոգևոր դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից:

## Նախագահ

Մխիթար Մնացականյան

## Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

## Պատվավոր նախագահ

Աշոտ Սարգսյան

## Պատվավոր անդամներ

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991թթ. |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական Կարմիր խաչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ Առողջապահության նախարար |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար |
| Գուֆար Կուրմաև | Ռուսական Կարմիր Խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |
| Կլաուս Հիկե | Բավարական Կարմիր խաչ |
| Մայքլ Ուիբել | Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն |
| Կառլ Շայդե | քահանա, Գթության խոհանոց ծրագրի ղեկավար |

## Բարերարի կոչում ստացած կազմակերպություններ

Կապանի «Դենո Գոլդ Մայնինգ քամփնի» ՓԲԸ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն

## Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 3 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| Աշխատակիցներ | 70 |
| Անդամներ | 3400 |
| Կամավորներ | 3200 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Բարեգործական ճաշարան | 3 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

## ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity. To be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population. To provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

## Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings regardless of nationality, race, sex, religious, beliefs, class and political opinions.

## President

Mkhitar Mnatsakanyan

## Secretary General

Anna Yeghiazaryan

## Honorary President

Ashot Sargsyan

## Honorary Members

| | |
|---|---|
| Rita Parsadanyan | ARCS President throughout 1975-1991 |
| Pier Michaud | French Red Cross |
| Gerhard Mayer | German Red Cross |
| Derenik Dumanyan | RA Minister of Healthcare |
| Gagik Martirosyan | RA State Minister |
| Gaphur Kurmayev | Russian Red Cross, rescuer |
| Harutyun Yesoyan | ARCS rescuer |
| Valeri Vardanyan | ARCS rescuer |
| Claus Heike | Bavarian Red Cross |
| Michael Uibel | German Red Cross Baden-Wurtemberg Provincial Branch |
| Karl-Heinz Scheide | Priest, Coordinator of Soup Kitchen program |

## Benevolent organizations

Deno Gold Mining Company
German Red Cross Baden-Wurtemberg Provincial Branch

## Overview

| | |
|---|---|
| Regional Branches: | 11 |
| Territorial Branches: | 3 |
| Community Branches: | 52 |
| Employees: | 70 |
| Members: | 3400 |
| Volunteers: | 3200 |
| “Gratsia” International Rehabilitation Centre: | 1 |
| Charity kitchens: | 3 |
| First Aid Training Methodological Centre | 1 |
| Hotel Compound: | 1 |
| Regional Warehouse Base: | 1 |
| Training Centre: | 1 |



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնել սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական և առողջապահական աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

# SOCIAL SUPPORT AND HEALTHCARE

With the purpose of assisting the state structures, decreasing social vulnerability of the people in need, as well as improving health of conditions of people in communities, the Armenian Red Cross Society implements large-scale activities dedicated to providing social support and health care to population.

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր՝ ուղղված միայնակ ծերերի, նացիոնալ-սոցիալստների զոհերի, հանրակացարանաբնակ և առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաների սոցիալական իրավիճակի բարելավմանը:

ՀԿԽԸ սոցիալական բաժնի աշխատանքներն ընդգրկում են մի շարք ոլորտներ՝ բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրում, սոցիալական ծառայությունների մատուցում, սննդամթերք, դեղամիջոցներ, հագուստ, հոգեբանական և խորհրդատվության աջակցություն:

ՀԿԽԸ սոցիալական բաժնի կամավորների կողմից անց է կացվել **«Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք»** ծրագիրը, որը ֆինանսավորվել է Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյութեմբերգի երկրամասային միավորումը և գերմանական «Հիշողություն, Պատասխանատվություն, Ապագա» հիմնադրամի կողմից: Ծրագրում ընգրկվել են 120 շահառուներ Երևանից, Վանաձորից, Նոյեմբերյանից, Բերդից և Գյումրիից:

Շահառուները ծրագրի շրջանակներում ստացել են հոգեբանական աջակցություն, բժշկական խնամք, իսկ ամիսը մեկ անգամ էլ՝ սնունդ, բժշկի նշանակմամբ դեղամիջոցներ, հագուստ, հիգիենիկ պարագաներ:

Նորվեգական, Ճապոնական, Գերմանական, Բադեն-Վյութեմբերգի երկրամասային Կարմիր խաչերի ֆինանսավորմամբ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի, Արագածոտնի, Տավուշի, Լոռու մարզերում սոցիալական բաժնի կամավորների միջոցով իրականացվել են նաև 210 միայնակ տարեցների տնային խնամք ու փոքր վերանորոգման աշխատանքներ:

**«Սոցիալ-հոգեբանական աջակցություն փախստականներին»** ծրագրի շրջանակներում Երիտասարդական Կարմիր Խաչի (ԵԿԽ) թվով 20 կամավորներ և 4 լիդերներ այցելել են Երևանի Արցախի 10 և Շիրակի 7 հասցեներում բնակվող հանրակացարանաբնակ 70 միայնակ ծերերի և 70 երեխաների, կազմակերպել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ՝ տրամադրելով սնունդ և հիգիենիկ պարագաներ:

Հանրակացարանաբնակ 70 երեխաների հետ աշխատանքն իրականացվել է **«Ժպիտների ակումբ»** ծրագրի շրջանակներում: Երեխաների համար կամավորները կազմակերպել են բազմաբնույթ դասընթացներ, ժամանցային և սպորտային միջոցառումներ, ամառային վրանային ճամբարներ: Ծրագրում առանձնահատուկ տեղ են հատկացվում հանրակացարանաբնակ երեխաների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացներին մասնակցած նրանց հասակակից դպրոցականների համար համատեղ կազմակերպված էքսկուրսիաները, որոնք շփման և ինտեգրման մեծ հնարավորություն ընձեռեցին երեխաներին:

Շուրջ 18 առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաներ շարունակում են եռամսյակային դրամական նպաստ ստանալ Լիոնի «Հայ Կարմիր Խաչի օգնության կոմիտե»-ի կողմից:

## Social Programs

ARCS implements a number of social programs directed at improvement of lonely elderly people, victims of National Socialism, children living in dormitories and social conditions of the most vulnerable orphans.

Works of the Social department of the ARCS distributed in a number of areas such as investigating social conditions of population, social services, food, medicines, clothing, psychological and counseling support.

The volunteers of the Social department of ARCS continued implementation of **"Psychosocial and Medical support to National Socialism in Armenia"** program with funding of Baden Wurttemberg Provincial Branch of the German Red cross and "Memory, Responsibility, Future" German foundation. In the frames of the program 120 beneficiaries from 120 beneficiaries, NS program in Ijevan, Vanadzor, Noyemberyan, Berd, Gyumri and Yerevan were included.

In the frames of the program beneficiaries were distributed parcels of food, medicaments prescribed by doctors, hygiene supplies on a monthly basis, psychological support as well as nurse care.

With funding of Norwegian, Japanese, Baden-Wurttemberg Provincial branch the Red Crosses volunteers of Social Department carried out home care and little repair works to 210 lonely elderly people in Armavir, Shirak, Vayots Dzor, Aragacotn, Tavush, Lori regions of RA.

Within the framework of **"Psycho-Social Support for Refugees"** program 20 volunteers and 4 leaders of Red Cross Youth (RCY) have visited 70 lonely elderly people and 70 children living in Arcakh 10 and Shirak 7 dormitories in Yerevan, providing them food and hygienic parcels, as well as organizing a number of social and cultural events.

The work with children has started years ago in the framework of **"Smiley Club"** program initiated by ARCS. Volunteers have organized different kinds of educational sessions, entertaining and sports events, as well as summer tent camps for 70 children living in dormitories. A special place has been given to integration excursions organized for the children living in dormitories and schoolchildren who have participated in HIV/AIDS prevention and Healthy Generation peer education courses in different schools. These excursions give a great opportunity to the dormitory children to socialize with their peers and supports their integration into the society.



## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ակտիվ գործունեություն է ծավալում առողջապահության ոլորտում: Այս բնագավառում ՀԿԽԸ Առողջապահական բաժինը 2012թ. ընթացքում իրականացրել է «Կանգնեցնել Բազմադեղորայքակայուն տուբերկուլյոզը Հայաստանում», «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում», «ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-երի շրջանում» և «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրերը:**

## ՀԿԽԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

### «ԿԱՆԳՆԵՑՆԵԼ ԲԴԿ ՏԲ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«Կանգնեցնել ԲԴԿ ՏԲ Հայաստանում» ծրագրի շրջանակներում Երևանի երեք պոլիկլինիկաներում ամեն ամիս՝ միջինը 30 ԴԿ ՏԲ հիվանդների և նրանց ընտանիքի անդամների, տրամադրվում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, կրթում-լուսաբանում: Ծրագիրը ֆինանսավորում է «Էլայ Լիլի և կոմպանիա» կազմակերպությունը:

### «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

2012թ. ՀԿԽԸ-ն շարունակել է իր գործունեությունը ՏԲ կանխարգելման ոլորտում՝ իրականացնելով «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագիրը ամբողջ հանրապետության մասշտաբով, որը Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի մի մասն է: Ծրագիրը ֆինանսավորում է Գլոբալ Հիմնադրամը, որի ստացողը հանդիսանում է ՀՀ Առողջապահության նախարարությունը, իսկ ենթաստացողը՝ ՀԿԽԸ-ն:

**Ծրագիրն իրականացվում է հետևյալ ուղղություններով.**

- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում՝ հանրապետությունում գրանցված բոլոր ՏԲ հիվանդներին,
- Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին թարմ սննդային փաթեթների բաշխում ստացիոնարում, սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում պահպանողական փուլում, ձմռան 3.5 ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում, դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյութերի տրամադրում հանրապետությունում գրանցված բոլոր ՏԲ հիվանդներին,
- Խորհրդատուների աշխատանքային խմբի միջոցով կրթական-խորհրդատվական սեմինարների կազմակերպում ՏԲ հիվանդների համար՝ բուժման հետևողականությունը պահպանելու նպատակով,
- Բուժման հետևողականությունը պահպանելու նպատակով դեղակայուն և ռեգուլյար ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին, ՈՒՎԲ (DOT) ռազմավարության շրջանակներում, տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

**2012թ. ընթացքում ՏԲ ռեգուլյար հիվանդներին բաշխվել են 3768 սննդային և**

About 18 orphan children, who live in poverty, continue receiving quarterly financial support from Lyon Branch of the Committee for Support to the Armenian Red Cross.

## Health Program

**During 2012 Armenian Red Cross Society has implemented the following programs in the health direction, mainly in the sphere of HIV/AIDS and Tuberculosis'.- "Social Support to TB Patients", "Stop MDR TB in Armenia", "HIV Prevention among IDUS in Lori Marz", "HIV prevention in Armenia" projects.**

## The ARCS activities for Tuberculosis prevention

### "Stop MDR TB in Armenia"

Within the frames of "Stop MDR TB in Armenia" programme 30 MDR TB patients and their family members in 3 policlinics of Yerevan city were provided with psycho-social support, education-dissemination. The project is funded by "Eli Lilly and Company".

### "Social support to TB patients" programme

In 2012 ARCS continues its activities in the TB sphere by implementing "Social support to TB patients" programme on the entire territory of RA, which is a part of TB National program. The program is funded by the Global Fund whose recipient is the Ministry of Health and sub-recipient is ARCS.

**The program is implemented in the following directions:**

- Provision of food and hygienic parcels to TB patients in Yerevan and RA regions with the purpose of increasing the treatment adherence.
- Provision of fresh food in the policlinics, provision of food and hygienic parcels in outpatient phase, provision of heating costs for 3.5 winter months as well as provision of juice to MDR TB patients in Yerevan and RA regions with the purpose of reducing the harmful effects of drugs
- Organization of work through consultants of working group; implementation of the educational-consultative trainings for TB patients with the purpose of increasing the treatment adherence.
- Provision of transportation costs to TB/MDR patients or social workers within Directly Observed Treatment (DOT) strategy.

In 2012 within "Social support to TB patients" programme 3768









**3768 հիգիենիկ փաթեթներ, դեղակայուն ՏԲ հիվանդներին՝ 3108 սննդային և 1554 հիգիենիկ փաթեթներ:**

## ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ

Տուբերկուլյոզի դեմ պայքարի Համաշխարհային օրվա կապակցությամբ յուրաքանչյուր տարի մարտի 24-ին Հայկական Կարմիր Խաչի ընկերության Առողջապահական բաժինը Տուբերկուլյոզի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնողը արշավներ է կազմակերպում: Դա հնարավորութուն է տալիս բարձրացնել իրազեկվածությունը Տուբերկուլյոզի հետ կապված խնդիրների և լուծումների վերաբերյալ:

Այս տարի Հայկական Կարմիր խաչի ընկերության Առողջապահական բաժինը ՏԲ լուսաբանման արշավը կազմակերպել էր Երևան քաղաքի զորամասերից մեկում, քանի որ այս հիվանդությունն արդիական խնդիր է նաև բանակում:

«Հարց և Պատասխան» կարճ սեմինարի ընթացքում Հայկական բժշկական ինստիտուտի ՀԿԽԸ կամավորները և Առողջապահական բաժնի անձնակազմը զինվորներին բաշխեցին «Իսկ դու գիտե՞ս» խորագրով բուկլետներ՝ տուբերկուլյոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Հեպատիտներ B-ի, C-ի վերաբերյալ:

Ներկայացնելով օրվա ուղերձը, զինվորներին կոչ արվեց զերծ մնալ տուբերկուլյոզով հիվանդների նկատմամբ խտրականություն ցուցաբերելուց և լինել ավելի տեղեկացված: Կամավորները, զինվորներին՝ որպես խրախուսանք, նաև շոկոլադ բաժանեցին:

## ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Այս տարի ևս Երիտասարդական բաժինը շարունակեց իրականացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր՝ Գլոբալ Հիմնադրամի, Անդորրայի Կարմիր խաչի և ԱՄՆ խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: «Կողմնորոշվելու ժամանակն է» ծրագրի շրջանակներում Երևանում և ՀՀ մարզերում կազմակերպվեցին մի շարք հանրային միջոցառումներ, ինչպես օրինակ, բաց դասեր, կինոդիտումներ, թոք-շոուներ, քարոզարշավներ, մոմավառություն-երթեր, համերգներ և այլն: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող միջազգային օրերին սոցիալական ցանցերում տեղադրվեց համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև բջջային կարճ հաղորդագրություններ ուղարկվեցին VivaCell-MTS բջջային օպերատորի բաժանորդներին: Անդորրայի Կարմիր խաչի աջակցությամբ Երևանում և ՀՀ 3 մարզերում մեկնարկած «Երիտասարդներն ընդդեմ ՁԻԱՀ-ի» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 4 հանրային միջոցառումներ և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հավասարը հավասարին մեթոդով դասընթացներ դպրոցականների համար:

ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման գործընթացին նոր թափ հաղորդեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի Բջջային Կարճ Հաղորդագրության տեղեկատվական գծի գործարկումը, որը մեկնարկել էր 2011թ.: Ծրագիրը իրականացվել է ԱՄՆ խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ և Orange Armenia և VivaCell-MTS բջջային օպերատորների աջակցությամբ:

food and 3768 hygienic parcels were distributed to TB patients and 3108 food and 1554 hygienic parcels to MDR TB patients.

## World Tuberculosis Day

Every year on March 24, Health Department of Armenian Red Cross Society (ARCS) implemets public awareness raising campaign about the Global epidemic of Tuberculosis and efforts to eliminate the disease. World TB Day provides an opportunity to raise awareness about TB-related problems and solutions.

This year ARCS Health department organized the traditional TB dissemination campaign in one of the armed units of Armenian Armed forces located in Yerevan, as TB disease considers also being an actual issue in the army.

During the “Question and Answer” short session ARCS volunteers from Armenian Medical Institute and ARCS Health department staff members distributed among soldiers “Do you know?” booklets on TB, HIV and Hepatitis B, C, introducing the message of the day, as well as invoking soldiers to stop stigma and discrimination towards TB patients and be more informed about the disease. As an incentives the soldiers were provided with chocolates.

## HIV/AIDSprevention

This year ARCS has also continued implementing a number of programs concerning HIV/AIDS and its prevention. The programs were financially supported by Global Fund, Andorran Red Cross Society and the US Peace Corps Armenian office.

Within the “Time for Choice” program a number of public events, e.g. open classes, film-watching, talk-shows, campaigns, candle-lighting processions, concerts, etc. were organized in Yerevan and other regions of RA. Information about HIV/AIDS was placed on social networks on internationally recognized days concerning HIV/AIDS, as well as short informative messages were sent to the subscribers of VivaCell-MTS mobile operator as bulk SMS. With the help of Andorra RC, in Yerevan and 3 regional branches of RA, 4 public events were organized and peer to peer educational sessions were held for about HIV/AIDS for schoolchildren in the frames of “Youth against HIV” program.

The “SMS information helpline” program, started in 2011, gave a new rise to the increase of public awareness concerning HIV/AIDS and its prevention in RA. Armenian Red Cross Society (ARCS) and the US Peace Corps have initiated the “SMS information helpline” program in cooperation with

Ծրագրի շնորհիվ Orange Armenia և VivaCell-MTS բջջային օպերատորների բոլոր բաժանորդները հնարավորություն ստացան ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին առնչվող իրենց հուզող հարցերն անանուն ուղղել տրամադրված 6428 կարճ համարին (1 SMS-ի արժեքն է 0 դրամ) և 24 ժամվա ընթացքում ստանալ ճշգրիտ ու հակիրճ պատասխան՝ հատուկ պատրաստված ՀԿԽԸ երիտասարդ կամավորների կողմից: Ծրագրի իրականացման պահից մինչ 2012թ. ավարտը ստացվել է մոտ 27 000 հարց: 2011թ. Ծրագիրը ԿԽՄՖ Երիտասարդական մրցանակաբաշխության ժամանակը շահել էր 2րդ մրցանակը՝ դյուրակիր համակարգիչ, Կխ Գլխավոր Ասամբլեային մասնակցության ֆինանասական աջակցություն և 3000 շվ. ֆ. Ֆինանսական ներդրում, ինչը մեծապես նպաստեց ծրագրի շարունականություն և հնարավորություն տվեց ապահովել դրա հանրային իրազեկումը:

**«ՄԻԱՎ-ի նվազեցումը Լոռու մարզի ԹՆՕ-երի շրջանում»** ծրագրի նպատակն է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի նվազեցնել ԹՆՕ-ների խոցելիությունը ՄԻԱՎ-ի և այլ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների նկատմամբ ղ: 2012թ. շահառուների թիվը հասել է 129-ի: Ծրագրի շրջանակներում ԹՆՕ-ները ստացել են խորհրդատվություն/կամավոր խորհրդատվության և տեստավորման ուղեգրում, իրավաբանական, հոգեբանական, ինչպես նաև միանգամյա օգտագործման ներարկիչներ, պահպանակներ, ալկոհոլային խծուծներ: Ծրագիրը ֆինանսավորում է Գլոբալ հիմնադրամը և իրականացվում է «Առաքելություն Արևելք» կազմակերպության հետ համատեղ:

**«ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում»** ծրագիրը 2012թ. իր գործունեությունն իրականացնում է Վանաձոր, Գյումրի և Երևան քաղաքներում 15-23 տարեկան երիտասարդության և ուսանողության շրջանում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ ուսանողների համար՝ հավասարը հավասարին սկզբունքով, ինչպես նաև «Հարց և պատասխան» սեմինարներ դասախոսական կազմի համար: Երիտասարդներին տրամադրվել են տեղեկատվական նյութեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ, ինչպես նաև ապահովվել է խորհրդատվություն՝ այցելությունների և հեռախոսի միջոցով: Ծրագիրը ֆինանսավորում է Ամերիկյան Կարմիր խաչը:

### «ԱՌՈՂՋ ՍԵՐՈՒՆԴ» ԾՐԱԳԻՐ

2012թ. ընթացքում ՀԿԽԸ-ն՝ «Աշտարակ-Կաթ ՓԲԸ»-ի հետ համագործակցությամբ, շարունակեց «Առողջ սերունդ» ծրագիրը, որի նպատակն է դպրոցականներին իրենց իսկ միջավայրում տեղեկացնել, խրախուսել և հնարավորություն տալ ճիշտ ընտրություն կատարել իրենց առողջության և ապրելակերպի վերաբերյալ՝ հավասարը հավասարին մեթոդով կազմակերվող դասընթացների միջոցով: Դասընթացները ներառում են «Առողջ սնունդ և սննդակարգ», «Առանց ծխախոտ և ալկոհոլ», «Զբաղվենք սպորտով» և «Շրջակա միջավայրի պահպանություն» թեմաները: Յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակից դպրոցականների ուժերով կազմակերպվել են բնապահպանական էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ:

VivaCell-MTS and Orange Armenia mobile operators.

Due to the program the subscribers of Orange Armenia and VivaCell-MTS mobile operators have the opportunity to send questions about HIV/AIDS anonymously to the special short number 6428 (1 SMS costs 0 AMD) and within 24 hours the trained young volunteers will give a brief and accurate response to the questions of the subscribers. About 27000 questions via SMS were received by the end of 2012. In 2011 the project was a runner up for the Youth Award announced by the IFRC and won a notebook, financial support for participation in General Assembly and 3000 CHF financial contribution which has been used for PR activities of the project since 2012.

“HIV Prevention among IDUS in Lori Marz” program was aimed at reducing the vulnerability of IDUs towards HIV, Hepatitis and other blood borne and sexually transmitted infections. During 2012 the number of beneficiaries reached up to 129. Within the framework of the program VCT, legal, psychological counseling were implemented. Within the frames of the program the beneficiaries received disposable syringes, alcoholic pads and condoms. The project is funded by Global Fund and is implemented jointly with Mission East Armenia.

“HIV prevention in Armenia” programme is implemented in Vanadzor, Gyumri and Yerevan cities within youth aged 15-23. Within the frames of the program peer to peer educational seminars were organized for students as well as Q&A sessions were organized for the faculty members. The students were provided with the informative materials on HIV/AIDS, as well as they were provided with counseling through calls and visits. The project is funded by American Red Cross.

### "Healthy Generation"

During 2012, ARCS, in cooperation with “Ashtarak Kat” CJSC, continued the project “Healthy Generation”. By using the peer education method, the project aims to inform, encourage and give a chance to schoolchildren to make the right choice concerning their health and lifestyle. The courses involve the following themes: healthy food and nutrition, no smoking and no alcohol, going in for sports and protecting the environment. At the end of each session ecological excursions and other events were organized with the efforts of the schoolchildren.



# «ԳՐԱՑԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում, հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժում:

# "GRATSIA" INTERNATIONAL REHABILITATION CENTER

The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients' vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.

**«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնում իրականացվում է ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժում, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնում: Կենտրոնն իրականացնում է նաև հիվանդների մասնագիտական ուսուցում, սոցիալ-հոգեբանական վերականգնում, սանատոր-կուրորտային բուժում:**

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապևտ, հոգեբան և սպորտային մարզիչ:

Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ՝ ախտորոշում, ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն, կինեզոթերապիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնաբուժության սպորտային համալիր, սթրեսոլոգի կաբինետ, «ՍԿԷՆԱՌ» բաժանմունքը:

Իր գործունեության ընթացքում կենտրոնում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 10 000 հիվանդ ՀՀ-ից, ԱՊՀ-ից, եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: Կենտրոնում տարեկան կտրվածքով բուժում է ստանում 900-1000 հաշմանդամ, 280 վետերան, 5 փախստական, սոցիալապես անապահով խավի մոտ 526 ներկայացուցիչ:

Կատարվում են նաև դիսպանսեր տնային այցելություններ հաշվառման վերցրած ողնաշարի և ողնուղեղի վնասվածքով հաշմանդամներին՝ ցուցաբերելով բժշկական օգնություն և հետազոտում:

2012թ. նորացվել, ընդլայնվել և վերազինման է ենթարկվել ՄՎԿ-ի ջրացեխաբուժարանը և աղիքների լվացման բաժանմունքը, որը թույլ է տալիս բարձրացնել պացիենտների սպասարկման և պրոցեդուրաների անցկացման որակը:

Կենտրոնի «Փարոս» երգչախումբը և բասկետբոլի «Կլիկիա» թիմը պարբերաբար մասնակցում են սահմանափակ կարողությունների տեր մարդկանց համար տարբեր երկրներում կազմակերպվող համերգներին և մրցումներին:

Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստատոր Ալեքսանդր Մնացականյանը:

**The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients' vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.**

The Center continued co-operation with United Nations High Commissioner for Refugees and US Embassy in 2011. The goal of the co-operation is to support Armenian refugees from Iraq, offering Center's opportunities.

In the Center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.

The Center has broadened inpatient and outpatient rehabilitation services-diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesitherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologist's room, "SKENAR" Department.

During its activities about 10 000 patients from RA, CIS countries, from a number of European and Middle East countries have already received treatment and rehabilitation in the Center. During the year, 900-1000 disabled people, 280 veterans, 5 refugees, about 526 socially vulnerable people are cured in the Center.

In 2012 IRCs hydrotherapeutic mud-bath and intestine-cleaning department has been updated, expended and re-equipment, which allow to increase the quality of patient care and put the procedures in a high level.

Dispensary home visits are also made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination.

"Pharos" choir and "Kilikia" basketball team of the Center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.





# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

# DISASTER MANAGEMENT AND POPULATION MOVEMENT

## ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

**Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել բնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության աղետների նախապատրաստման և արձագանքման համակարգը:**

Հաշվետու տարում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ելնելով արտակարգ իրավիճակների ոլորտում միասնական առաքելությունից և խնդիրներից, աղետների ռիսկի նվազեցման և կանխարգելման ոլորտում, կլիմայի փոփոխությանն առնչվող հարցերում հարաբերությունների և համագործակցության համակարգեր և մեխանիզմներ սահմանելու անհրաժեշտությունից, պարտավորվելով հնարավոր աղետների դեպքում արդյունավետ և օպերատիվ միասնական արձագանք ապահովել:

Մեկ այլ կարևոր ձեռքբերում էր Ազգային ընկերության և Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերության միջև աղետներին նախապատրաստման և արձագանքման, ինչպես նաև սոցիալ-առողջապահական ոլորտներում Համագործակցության համաձայնագրի ստորագրումը:

### «ՀԿԽԸ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՄԱՐԶԵՐՈՒՄ»

Ազգային ընկերությունը 2012 թ.-ին իրականացրեց «ՀԿԽԸ կարողությունների զարգացում մարզերում» ծրագիրը Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման գործակալության (DFID) ֆինանսավորմամբ և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ և ԿՄ ՄՖ) աջակցությամբ: Ծրագրի նպատակն էր հզորացնել ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերից մեկը՝ նոր կամավորների ներգրավելով աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ոլորտում: Կամավորներին ՀԿԽԸ և ԱՌՆ գործունեության մեջ ինտեգրելու նպատակով կազմակերպվեց դասընթաց՝ խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ) և ԱՌՆ հիմնահարցերի վերաբերյալ: Այնուհետև, կամավորները թիրախ ընտրված Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքին սպառնացող վտանգները և դրանց նկատմամբ խոցելիության աստիճանը բացահայտելու նպատակով իրականացրեցին խոցելիության և կարողությունների գնահատում: Արմավիր քաղաքի թիրախային երեք դպրոցներում իրականացվեցին նաև աղետների վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված լայնածավալ դասընթացներ, որին հաջորդեց տարհանում և մանկական վիկտորինա մրցույթ:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Արմավիր քաղաքի 10 դպրոցներում մարտի 1-ին իրականացվեցին Քաղպաշտպանության օրվան նվիրված տարհանման վարժանքներ, որի ընթացքում բոլոր մասնակիցներին տրամադրվեցին ուսումնական նյութեր: Ավելին, Արմավիր քաղաքում կազմակերպվեց

## Disaster Management

**The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response structure of the Armenian Red Cross Society.**

Based on the common mission and problems in emergency field, as well as the necessity to establish cooperation mechanisms in the field of disaster risk reduction and prevention, climate change issues, Memorandum of Understanding was signed between Armenian Red Cross Society and RA Ministry of Emergency Situation, committing to ensure the effective and united reaction to the potential disasters.

Another significant achievement was the signing of a Cooperation Agreement with Coca-Cola Hellenic Armenia in the field of disaster preparedness and response as well as health and social care.

### "ARCS capacity building in the regions"

Armenian Red Cross Society implemented "ARCS capacity building in the regions" project with the support of International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC) and funding by UK aid from the Department for International development. The aim of the project was to strengthen one of ARCS regional branches through involving new volunteers in the Disaster Risk Reduction (DRR) activities. Training on Vulnerability and Capacity Assessment (VCA) and DRR issues was organized in order to integrate the volunteers into ARCS and DRR activities. The volunteers implemented VCA in the selected Janfida community of Armavir region in order to assess the hazards and level of vulnerability towards those hazards and summering assessment results, developed VCA report. Awareness raising trainings on disaster were also organized in three schools of Armavir city, proceeded with an evacuation and children quiz.

Within the framework of the project on the 1st of March evacuation exercises were organized in ten schools of Armavir city dedicated to the Civil protection day. During the simulation exercise all participants received educational materials. Furthermore, public events were organized in Armavir city on a voluntary basis. Over 25 volunteers distributed printed materials on





կամավորական հանրային միջոցառում: Շուրջ 25 կամավորներ, շրջելով Արմավիր քաղաքում, անցորդներին բաժանեցին «Երկրաշարժ», «Ջրհեղեղ», «Հրդեհ», «Կլիմայի փոփոխություն» թեմաներով տպագիր նյութեր և քննարկումներ ծավալեցին ԱՌՆ թեմայի շուրջ:

## «ԿԱՌՈՒՑԵՆՔ ԱՆՎՏԱՆԳ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

2012թ. Ազգային ընկերությունն սկսեց իրականացնել «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի երկրորդ փուլը, որը համաֆինանսավորվում է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO), Դանիական, Իսլանդական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունների կողմից և ԿԽ և ԿՄ ՄՖ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի առաջին փուլի թիրախ հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի 9 համայնքներին և 32 դպրոցներին ավելացան ևս 5 համայնք և 33 դպրոց: Ծրագրում ընդգրկված շահառուներն են մոտ 21 970 դպրոցականներ և նրանց հարազատները՝ շուրջ 65 910 մարդ, ինչպես նաև՝ 14 համայնքների 30 650 բնակիչներ:

Ծրագրի հիմնական **ուղղություններից առաջինի** շրջանակներում, որն է՝ «Համայնքների դիմակայունության հզորացում», թիրախային հինգ նոր համայքներում իրականացվեց աղետների նկատմամբ ԽԿԳ՝ ուղղված համայնքների վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտմանը: Գնահատման արդյունքների հիման վրա ՀԿԽԸ թիմը Շիրակի մարզային Փրկարարական ծառայության հետ համատեղ մշակեց ԽԿԳ զեկույց, որը ներառում է տվյալ համայնքի աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլան և ռիսկային գոտիների քարտեզ: Նոր շահառու համայնքներում ձևավորվեցին Համայնքային թիմեր (ՀԹ)՝ յուրաքանչյուրում 20 անդամ, որոնք հանդիսանում են տեղական կարողություն և բնակչության պաշտպանության գործիք: Ավելին, նրանք նպաստելու են նաև աղետների ռիսկի նվազեցման համայնքակենտրոն ծրագրերի իրականացմանը:

ՀԹ-ներին ԱՌԿ ոլորտի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ տալու և նրանց պատրաստվածության բարձր մակարդակը ապահովելու համար ՀԿԽԸ-ն կազմակերպել է տեսական և գործնական հետևյալ դասընթացները՝ «Աղետների ռիսկի կառավարման հիմունքներ», «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման լուսաբանում և նրա աղետների արձագանքման գործիքները», «Սոցիալ հոգեբանական աջակցություն», «Փրկարարական հիմունքներ և առաջին օգնություն»: Այնուհետև, ձեռք բերված գիտելիքները ամրապնդելու նպատակով՝ 14 ՀԹ-երի ներգրավվմամբ, կազմակերպվել են դաշտային ուսումնական վարժանքներ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Շիրակի մարզային փրկարարական ծառայության և «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ հ/կ-ի հետ համատեղ:

Ծրագրի **երկրորդ ուղղության** շրջանակներում, որն է՝ «Իրազեկման մակարդակի բարձրացում», շահառու նոր 33 դպրոցների 80 ուսուցիչների համար

Earthquake, Flood, Fire, Climate Change, etc. in the city and discussed DRR issues.

## "Building Safer Local Communities in South Caucasus"

NS started implementation of "Building Safer Local Communities in South Caucasus" project's 2nd phase. The project is co-funded by the European Commission's Humanitarian aid and Civil Protection Directorate General (ECHO), Danish, Icelandic and Austrian Red Cross Societies in a consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies. Five new communities and 33 new schools were added to already selected nine communities and 32 schools. Thus, the beneficiaries of the project are approximately 21.970 schoolchildren and their relatives, about 65.910 persons, as well as 30.650 inhabitants of the fourteen communities.

Within the frames of the **first direction** of the project, which is "Strengthening communities' resilience", VCA was conducted in 5 new targeted communities. Based on the VCA results ARCS team jointly with Shirak regional rescue service, developed VCA reports, which included Disaster Preparedness and Response plan of action and community risky areas mapping for each community. 5 new Community teams (CT) were formed consisting of 20 members in each team, which represent a local capacity and a tool for protection of the population. Moreover, they will support the implementation of community centered projects aimed at disaster risk reduction.

To provide the CTs with corresponding knowledge in the sphere of Disaster Risk Management and ensure a high level of preparedness, ARCS organized the following theoretical and practical trainings: "Disaster Risk Management Skills", "Dissemination of Red Cross and Red Crescent Movement and its Disaster Response mechanisms", "Psychosocial support", "First Aid and Rescue Skills". In order to strengthen gained knowledge, simulation drills were organized for 14 targeted CTs jointly with Shirak regional Rescue Service of RA Ministry of Emergency Situations and "LORE" rescue team.

Within the framework of the **second direction** of the project, which is "Raising the level of populations' preparedness", ToT for 80 teachers from new beneficiary 33 schools of Shirak region as well as refreshing trainings for 150 teachers from old beneficiary 32 schools have been organized. First aid, DRR related issues, Climate Change, etc. were included in the agenda. Then


Coca-Cola




PETZL

կազմակերպվել են հատուկ դասընթացներ՝ առաջին օգնություն, ԱՌՆ, Կլիմայի փոփոխություն և նման այլ թեմաներով, ինչպես նաև նախորդ 32 դպրոցների 150 ուսուցիչների համար կազմակերպվել են գիտելիքների թարմացման դասընթացներ: Դասընթացին մասնակցած նոր 33 դպրոցների ուսուցիչներից յուրաքանչյուրն իր դպրոցի 100 աշակերտների համար կազմակերպել է հատուկ դասընթաց, ինչպես նաև բաժանել «Աղետի ընտանեկան պլան» թերթիկ-ուղեցույցը՝ իրենց ընտանեկան պլանը մշակելու համար, որի հիման վրա կազմակերպվել են մրցույթներ:

Մրցույթում հաղթող բոլոր 96 երեխաները պարգևատրվել են խրախուսական մրցանակներով: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է նաև Դեկտեմբերի 7-ին նվիրված հանրային միջոցառում, որի ընթացքում տեղի ունեցավ «Աղետի ընտանեկան պլանի» եզրափակիչ մարզային փուլը:

Ծրագրի **երրորդ ուղղության** շրջանակներում, որն է «Աղետների ռիսկի նվազեցման համայնքային մոդելի մշակում», երկու տարածաշրջանային սեմինարներ կազմակերպվեցին Հայաստանում և Վրաստանում Հայկական և Վրացական Կարմիր խաչի ընկերությունների անձնակազմի, կամավորների և հիմնական շահագրգիռ կողմերի համար:

Հաշվետու տարում տեղի ունեցավ հանդիպում Շիրակի մարզի մարզպետի և ՀԿԽԸ նախագահի, Գլխավոր քարտուղարի, ՀԿԽԸ Շիրակի մարզի մասնաճյուղի նախագահի և ԱԿ/ԲՏ բաժնի պետի միջև: Հանդիպման ընթացքում ներկայացվեց և քննարկվեց ծրագիրը: Մարզպետն իր պատրաստակամությունը հայտնեց համագործակցելու և ծրագրին աջակցելու գործում: Ավելին, համակարգման հանձնաժողովի երկու հանդիպում կազմակերպվեց Շիրակի մարզում մարզային և տեղական իշխանությունների և համակարգման հանձնաժողովի անդամների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվեցին ծրագրի ձեռքբերումները, ինչպես նաև հետագա քայլերը:

Ծրագրի **չորրորդ ուղղության** շրջանակներում, որն է «ԱՌՆ և Կլիմայի փոփոխության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում», հաշվետու տարում իրականացվեցին ԱՌՆ դասընթացներ և վիկտորինաներ Երևանի և Գյումրու թվով չորս դպրոցներում նվիրված ԱՌՆ միջազգային օրվան: Բոլոր մասնակիցները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Ավելին՝ դպրոցներին և դասընթացների բոլոր մասնակիցներին տրամադրվեցին Հայաստանի Հանրապետության տարածքում առավել հաճախ տեղի ունեցող աղետների վերաբերյալ պաստառներ և այլ տպագիր ուսումնական նյութեր: Դպրոցներում դասընթացների կազմակերպումը նպատակ ուներ աշակերտներին ներկայացնելու աղետներին նախապատրաստման կարևորությունը և անհրաժեշտությունը, ինչպես նաև նրանց մեջ սերմանել կամավորության ոգի:

### «ԿԱՌՈՒՑԵՆՔ ԱՆՎՏԱՆԳ և ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ»

Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության ֆինանսավորմամբ հաշվետու տարվա դեկտեմբեր ամսից մեկ-

each trained teacher from new 33 schools organized training for 100 pupils in targeted schools, as well as distributed Family Emergency Plan checklist for developing their Family emergency plan, based on which competitions were organized in targeted schools. 96 winners of the competition were awarded with incentive prizes. Within the frames of the project public event was organized dedicated to the 7th of December, during which Family Emergency Plan final phase/regional level competition took place.

Within the framework of the **third direction** of the project, which is “Developing Community Based Disaster Risk Reduction Model”, two regional seminars were organized (one in Armenia, one in Georgia) for Armenian and Georgian Red Cross staff, volunteers, as well as for key stakeholders.

During the reporting year a meeting took place among the Governor of Shirak region, the ARCS President and Secretary General, as well as the president of ARCS Shirak regional branch and the head of DM/PM department where the project was presented and discussed. The Governor expressed his willingness and readiness to cooperate and support the project implementation. Moreover, two Regional Coordination Commission meetings were organized in Shirak region for regional and local authorities, Coordination Commission members. During the meetings project's achievements and further steps/activities were presented.

Within the framework of the **fourth direction** of the project, which is “Raising public awareness on DRR and Climate Change”, trainings and children quizzes were organized in four schools of Yerevan and Gyumri dedicated to DRR International Day. All participants were awarded with incentive prizes. Moreover, all schools and participants of the training sessions were provided with posters and other printed materials on disasters which the territory of the Republic of Armenia is prone to. The aim of the trainings was to show pupils the importance and necessity of disaster preparedness as well as to instill the spirit of volunteerism.

### "Building Safe and Resilient Communities"

From the 1st of December “Building Safer and Resilience Communities” project was started with the financial support of Austrian Development Agency and Austrian Red Cross. Yerevan, Vanadzor and Stepanavan cities, as well as four rural

նարկեց «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագիրը: Ծրագրի իրականացման համար, որպես թիրախ ընտրվել են Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքները, ինչպես նաև Լոռու մարզի չորս գյուղական համայնքներ: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել Հայաստանում գյուղական և քաղաքային համայնքների բնակչության խոցելիությունը աղետների նկատմամբ: Համայնքներն ավելի լավ պատրաստված կլինեն՝ ունենալով համապատասխան հմտություններ և արձագանքման մեխանիզմներ՝ աղետների հետևանքները մեղմացնելու համար: Թիրախային համայնքները կընդլայնեն/կամրապնդեն իրենց տեղական կարողությունները և կարող են առաջինն արձագանքել աղետներին:

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Բնակչության տեղաշարժի (ԲՏ) ուղղության շրջանակներում իրականացնում է ՀՀ-ում ապաստան հայցողներին և փախստականներին առաջնային մարդասիրական, սոցիալ-հոգեբանական աջակցություն, խորհրդատվության տրամադրում, սահմանային վերահսկողության իրականացում, փախստականների մեծածավալ ներհոսքի դեպքում վաղ ազդարարման համակարգի ստեղծում, փախստականների ինտեգրմանը նպաստող գործունեություն ծավալում, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ՀՀ-ում թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործունեությանը:**

2012թ. ընթացքում ՀԿԽԸ-ի բնակչության տեղաշարժի ուղղությունը շարունակել է աջակցել փախստականներին և ապաստան հայցողներին՝ ՄԱԿ Փախստականների գրասենյակի համակարգողի կողմից ֆինանսավորվող «Փախստականների ընդունման և ինտեգրում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն ուներ մի շարք նպատակներ՝ կապված ապաստան հայցողների ընդունման և փախստականների տեղական ինտեգրման հետ, ինչպես օրինակ՝ ընդունման պայմանների մոնիտորինգը, կողմնորոշման և լեզվի դասընթացների տրամադրումը, շահառուներին աշխատանք գտնելու աջակցությունը և հանրային իրազեկման ուղղությամբ աշխատելն ու փախստականների դրական ընկալման ձևավորումը:

ՀԿԽԸ-ն ապաստան հայցողներին և նոր ճանաչված փախստականներին տրամադրել է ընդհանուր աշխատանքային խորհրդատվություն և կողմնորոշում, ինչպես նաև աջակցել շահառուներին աշխատանք գտնելու հարցում՝ համագործակցելով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և մասնավոր գործակալությունների հետ: Փախստականներին և ապաստան հայցողներին ինտեգրման հարցում աջակցելու նպատակով ՀԿԽԸ-ն իրականացրել է մի շարք տեղեկատվական սեմինարներ՝ անդրադառնալով շահառուների համար արդիական հարցերի, ինչպես, օրինակ՝ Հայաստանում ապաստան հայցող անձանց իրավունքները՝ նե-

communities of Lori region were selected for the implementation of the project. The main objective of the project is to contribute towards reducing vulnerability to disasters of rural and urban population in Armenia. As the result of the project targeted communities will be better prepared, will have adequate skills and coping mechanisms to mitigate the effects of disasters, as well as will strengthen their local capacities and will be able to initiate first response.

## Population movement

**In the frames of the Population Movement (PM) direction the Armenian Red Cross (ARCS) is providing asylum seekers and refugees in RA with basic humanitarian, psychosocial assistance and advocacy. The direction is also implementing regular border monitoring, is working on establishment of an Early Warning System in case of a massive refugee influx and is involved in activities aimed at intergraton of refugees, as well as prevention of trafficking and fighting against it in RA.**

Throughout 2012 ARCS Population Movement direction has been supporting refugees and asylum seekers in the frames of UNHCR-funded “Refugee reception and integration” project.

The project aimed at achieving a number of objectives related to the reception of asylum-seekers and the local integration of refugees such as monitoring of reception conditions, provision of orientation and language training, supporting the beneficiaries in finding employment and working towards public awareness and creation of positive perception of the refugees.

ARCS provided general and employment counseling and orientation to the asylum seekers and newly recognized refugees, as well as assisted the beneficiaries in finding employment in cooperation with the State Employment Service Agency and private labor agencies. To support the asylum-seekers and refugees in their local integration, ARCS conducted series of information session touching upon issues of importance to the beneficiaries, such as the rights of persons seeking asylum in Armenia, including labor rights; the ways of finding employment, etc.


Armenian
Red
Cross
Society
Հայկական
Կարմիր
Խաչի
Ընկերություն

րառյալ աշխատանքային իրավունքները; աշխատանք գտնելու եղանակնե-րը և այլն:

ՀԿԽԸ-ն՝կամավորների օգնությամբ, հատուկ կացարանում բնակվող 20 ֆրանսիախոս և պարսկախոս ապաստան հայցողների համար կազմակերպել է հայերեն լեզվի դասեր: Հայոց լեզուն սովորելու հնարավորությունն ու շփման ընդհանուր հմտությունների ձեռքբերումը մեծապես նպաստում են շահառուների ինտեգրմանը:

Հունիսի 21-ին փախստականների միջազգային շաբաթվա կապակցությամբ ՀԿԽԸ-ն միջոցառում էր կազմակերպել, որն անցկացվեց 2 մասով՝ խոհարարական մրցույթից և ինտերակտիվ իրազեկումից, որոնց նպատակն էր բարձրացնել հանրային իրազեկումը փախստականների խնդիրների և հասարակության մեջ նրանց դերի մասին: Միջոցառման ընթացքում այգու այցելուներն ու միջոցառման հյուրերը հնարավորություն ունեցան ոչ միայն համտեսել տարբերի երկրների խոհանոցների ավանդական ճաշատեսակներ, այլև շփվել փախստականների և ապաստան հայցողների հետ: Միջոցառմանը մասնակցեց ավելի քան 300 մարդ:

Տարվա երկրորդ կեսին սիրիացիների՝ Հայաստան մեծաքանակ ներհոսքի հետ կապված, ՀԿԽԸ-ն համապատասխան քայլեր ձեռնարկեց՝ սիրիացիների կարիքներին պատշաճ արձագանքելու համար: Սեղմ ժամկետում իրականացվեց սիրիահայերի կարիքների գնահատում, որի արդյունքում ՀԿԽԸ-ն շուրջ 300 սիրիահայերի տրամադրեց ձմեռնամուտի աջակցություն:

Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ-ն աջակցեց նաև Ապաստան հայցողների հատուկ կացարանին՝ տրամադրելով նրանց անկողնային պարագաներ, սպիտակեղեն, սպասք և կենցաղային սարքեր, որի շնորհիվ հնարավոր դարձավ ավելի շատ ապաստան հայցող անհատների և ընտանիքների կացարան տրամադրել:

2012 թ.-ին ավելի քան 500 մարդ օգտվեց ծրագրից՝ ՀԿԽԸ-ից ստանալով անհրաժեշտ ուղղորդում և խորհրդատվություն, հայոց լեզվի դասեր, ձմեռնամուտի աջակցություն և սնունդ:

With the help of ARCS volunteers, ARCS delivered Armenian language classes in the Reception Center for 20 French- and Farsi-speaking Asylum Seekers. Having an opportunity to learn Armenian language and obtain basic communication skills facilitated the beneficiaries in their local integration.

An event devoted to the International Refugee Week was organized by ARCS on 21st of June. The event consisted of two parts: a cooking contest and an interactive awareness raising activity which aimed at raising the public awareness of refugee issues and the input of refugees into the society. During the contest the visitors of the park and the invitees had the opportunity not only to taste the traditional dishes, but also to interact with the refugees and asylum seekers. More than 300 people were reached during the event.

Connected with influx of Syrians to Armenia in the second half of the year ARCS made corresponding actions to insure an adequate response to the needs of the Syrians. A rapid needs assessment was conducted among the Syrian Armenians, as a result, more than 300 Syrian-Armenians received winterization assistance from ARCS.

In the frames of the project, ARCS also supported the Reception Center for Asylum Seekers providing them with bedding, linen, kitchen utensil and appliances in the times of influx of Syrians to Armenia, to help them give shelter to more asylum-seeking individuals and families.

In 2012, around 500 people benefited from the project, receiving counseling and orientation, Armenian language classes, winterization and food assistance from ARCS.



ARMENIA

# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնի գործունեության հիմնական նպատակն է բնակչության խոցելիության նվազեցումը տարբեր տեսակի աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ՝ առաջին օգնության գիտելիքների տարածման միջոցով:

# FIRST AID

The main goal of the First Aid Training Methodology Center (FATMC) of the Armenian Red Cross Society (ARCS) is decrease the vulnerability of the population towards different types of disasters and accidents by disseminating First Aid knowledge and skills.

## ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև ծավալում գործունեություն՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի դաստիարակմանը:

Կենտրոնն իրականացնում է ԱՕ ԿԽ և ԿՄ ուղեցույցներին համաձայն առաջին օգնության և անվտանգ վարքագծի դաստիարակման դասընթացներ և սեմինարներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:

### ՏԱՐՎԱ ՆՎԱՃՈՒՄԸ

2012թ. հուլիսի 5-ից 8-ը՝ մասնակցելով Իռլանդիայում կայացած ԱՕ Եվրոպական առաջնությանը (FACE-2012), ՀԿԽԸ հավաքականը գրավել է 3-րդ տեղը՝ 10 տարի շարունակ տեղ գրավելով Եվրոպական լավագույն ԱՕ խմբերի տասնյակում:

Նույն մրցումներին մեր հավաքականը ճանաչվել է հաղթող և ստացել հատուկ մրցանակ՝ լավագույն մարդասիրական մոտեցման և հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար:

### ԱՕ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

2012թ.-ին իրականացվել են դասընթացներ և սեմինարներ Հայաստանի բնակչության, ՀԿԽԸ կամավորների, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների աշխատակիցների համար:

2012 թվականի ընթացքում կենտրոնն իրականացրել է 18 դասընթաց, 26 սեմինար, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են ավելի քան 545 մարդ:

### «ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օժանդակությամբ իրականացվել են 6 «Առաջին օգնության հիմունքներ» դասընթացներ ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում: Դասընթացներին մասնակցել է 80 հոգի:

### ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ և ՆՐԱՆՑ ԽՆԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Համագործակցելով Վորլդ Վիժն Հայաստան բարեգործական կազմակերպության հետ ԱՕՈՒՄԿ-ն Երևանում իրականացրել է «ԱՕ և անվտանգ վարքագիծ» 2 դասընթաց: Այդ դասընթացներին մասնակցել են նախադպրոցական հաստատությունների 50 երեխա:

Նախադպրոցական հաստատություններին տրամադրվել են անվտանգ վար-

## First Aid Training Methodology Center Department

### The Spheres of Activities

The ARCS FATMC disseminates FA knowledge and skills in different groups of population, provides FA treatment at mass gatherings as well as engages in promoting Safe Behavior (SF) among the growing generation.

The FATMC holds trainings and seminars on FA and SB for people of different age and occupational groups in accordance with European RC/RC guidlines on First Aid.

### The Achievements of the Year

During the First Aid Convention in Europe (FACE) on July 5-8 in 2012, the ARCS FA National team took the third place and thus continued to be among the best European teams over the last ten years.

In the same competitions, our national team was recognized as the winner and got a special prize for providing the best humanistic approach and psychological treatment.

### First Aid Trainings

In 2012, trainings and seminars were held for the population of Armenia,

ARCS volunteers as well as employees of different organizations. Overall, during the year 2012, the FATMC held 18 trainings and 26 seminars attended by more than 545 people.

### First Aid Trainings for the RA Population of Borderline Communities

With the support of the International Committee of the Red Cross, six trainings on Basic First Aid were held in Tavoush and Syuniq regions. The trainings were attended by 80 people in total.

### Trainings for Children and Their Caregivers

In cooperation with World Vision Armenia, the FATMC held two “First Aid and Safe behavior” training courses in Yerevan. The participants of the training courses were 50 children from kindergartens.

The kindregartens were provided with games and SB methodological handbooks needed for the organization of SB classes.



քագծի դաստիարակման պարապմունքներն իրականացնելու համար նախատեսված խաղեր և «Անվտանգ վարքագծի դաստիարակում» մեթոդական ուղեցույց:

## Լրացուցիչ գործունեություն

**Ֆուտբոլի խաղերի սպասարկում**

2012 թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում Երևանում կայացած բոլոր խաղերի ընթացքում ԱՕ խմբերն իրականացրել են ԱՕ ծառայություն:

## Միջազգային համագործակցություն

Այս տարվա ընթացքում ՀԿԽԸ մասնագետներն իրականացրել են հրահանգիչների նախապատրաստման 2 դասընթաց Ղազախստանի և Թաջիկիստանի Կարմիր Մահիկների մասնագետների համար:

Առաջին օգնության բաժինի ներկայացուցիչը մասնակցել է հոկտեմբերի 11-ից 13-ը Դուբլինում, իսկ հոկտեմբերի 22-ից 26-ը՝ Ղրիմում տեղի ունեցած միջազգային սեմինարներին:

## ԱՕ գիտելիքների տարածում ԶԼՄ-ում

Նախապատրաստվել և եթեր են հեռարձակվել մի քանի հաղորդում, որոնց նպատակն էր ծանոթացնել մարդկանց ԱՕ ցուցաբերման տարրական քայլերին:

Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը՝ ավելի քան 500 մարդ:

## Additional Activities

**Football Event Service**

In 2012, FA teams provided FA service during all the football events in Yerevan within the scope of FIFA and UEFA.

## International Cooperation

During this year, the ARCS specialists held two trainings for specialists from the Kazak and Tajik Red Crescents on preparing FA instructors.

The representative of the FATMC Department participated in the international seminars in Dublin on October 11-13 and in Crimea on October 22-26 in 2012.

## Dissemination of First Aid Knowledge through Mass Media

Several programs were prepared and broadcasted aimed at making people aware of FA basics

The Number of Beneficiaries Attended to - over 500.





# ՈՐՈՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Հայկական Կարմիր խաչի ընկերության Որոնում ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտանբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:**

2012թ. ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերության Որոնում ծառայությունը ստացել է ավելի քան 36 որոնման հայտ: Կատարված աշխատանքների շնորհիվ ավարտվել է 24 հայտ, որոնցից 14-ը ստացել է դրական, իսկ 10-ը՝ բացասական արդյունք: Հեռուստատեսային քարոզարշավի ընթացքում, անհայտ կորածների որոնումը կազմակերպելու նպատակով, պատրաստվել և եթեր է հեռարձակվել սոցիալական հոլովակ: Հեռուստաքարոզարշավը մեծապես նպաստեց որոնման դրական արդյունքներ ստանալուն և ծառայության լուսաբանմանը: Հոլովակի ցուցադրումից հետո ավելացավ Որոնում ծառայություն դիմողների թիվը:

Ղարաբաղյան հակամարտության հետևանքով կա դեռևս 4565 անհայտ կորած անձ, որոնցից 407-ի վերաբերյալ Հայաստանում բացվել են որոնման հայտեր: ԿԽՄԿ-ի պատվիրակությունն անցկացրել է տարբեր գնահատումներ և եկել այն եզրակացության, որ նույնիսկ 17 տարի անց անհայտ կորածների ընտանիքներն (ԱԸԿ) ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:

2008-2009թթ. ընթացքում ՀԿԽԸ-ն և ԿԽՄԿ-ն հաջողությամբ իրականացրել են «Անհայտ կորածների մինչմահու տվյալների հավաքագրում» (ՄՄՏ) համատեղ ծրագիրը: 2012թ. հոկտեմբեր ամսին որոշում է կայացվել շարունակել այն: Ծրագրի նպատակն է ՀՀ տարածքում իրականացնել հակամարտության հետևանքով անհայտ կորածների վերաբերյալ ՄՄՏ-ի կանոնավոր հավաքագրում, որը պետք է օգտագործվի աճյունների ինքնության հաստատման գործընթացում:

Այս ծրագրի իրականացման ընթացքում առավել ակնհայտ դարձան անհայտ կորած հարազատ ունենալու սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները: Դա հիմք ընդունելով՝ ԿԽՄԿ-ն և ՀԿԽԸ-ն ձեռնարկեցին «Աջակցություն անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսավորմամբ, որի նպատակն է ուժեղացնել Որոնում ծառայության պատրաստվածությունը՝ հասկանալու և հոգալու ընտանիքների կարիքները: Ելնելով կարիքից՝ Որոնում ծառայությու-

# TRACING SERVICE

**The Armenian Red Cross Society Tracing Service is dedicated to tracing and restoration of family links lost through population movement, searching of notifications confirming the place of the grave of the victims of war, conflict and disasters, tracing or assistance in the tracing of documents confirming that a person was subjected to evacuation, captivity, forced departure or forced labor during Second World War.**

During 2012, the Armenian Red Cross Society Tracing Service received more than 36 cases. 24 cases have been completed. 14 cases have been closed positively, whereas 10 negatively. In the frameworks of TV campaign a social video clip was made and broadcasted by TV channels in order to organize tracing of missing persons. TV campaign promoted to get positive result on the case and dissemination of TS.

In the aftermath of the Karabakh conflict as much as 4533 people are still missing, and for 407 of them tracing requests were opened in Armenia. ICRC delegation conducted a variety of assessments and concluded that even 17 years later, families of missing persons have economic, legal, psychological and social needs.

In 2008-2009 ARCS and ICRC has successfully completed joint project "Missing persons' Ante-mortem data collection". In 2012 the program is continuing. The aim of program is the collecting of detailed dates about missing persons, which will be use during the process to assist with future identifications.

Social and psychological severe consequences of having missing relatives became more obvious during the project. Based on this facts ICRC and ARCS undertook the project of "Accompanying Families of Missing Persons" by the financial support of the International Committee of the Red Cross. The purpose of the program is to strengthen the preparedness of Tracing Service to identify and address the needs of restoring family links. Based on needs TS provides beneficiaries to appropriate organizations for legal consultations.

In the program involved missing persons' families from Tavush (9), Shirak (11), Lori (21) and Armavir (39) regions. 50 families

նը ցուցաբերում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, տրամադրում է խորհրդատվություն, ուղղորդում է շահառուներին համապատասխան կազմակերպություններ իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:

Ծրագրում ներգրավված են Տավուշի (9), Շիրակի (11), Լոռու (21) և Արմավիրի (39) մարզերի անհայտ կորածների ընտանիքները: Այս մարզերում բնակվող առնվազն 50 ԱԸԿ-ներ կանոնավոր կապ են պահպանում ՀԿԽԸ-ի սոցիալական աշխատողների և մարզային մասնաճյուղերի նախագահների հետ: ՀԿԽԸ-ի սոցիալական աշխատողներն այցելել են անհայտ կորածների 20 ընտանիքների:

Մասնաճյուղի հնարավորությունների շրջանակներում` հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ են կազմակերպվել բոլոր 4 շրջաններում: Առնվազն մեկական միջոցառում է կազմակերպվել Շիրակի, Տավուշի, Լոռու և Արմավիրի մարզերի ԱԿԸ-ների համար: ԱԿԸ-ները համապատասխանաբար ուղղորդվում են աջակցություն տրամադրող այլ կազմակերպություններ:

Վերը նշված մարզերում բնակվող ԱԿԸ-ների համար կազմակերպվել են ֆուրշետի դասընթացեր, մասնակիցները ստացել են համապատասխան հավաստագրեր: Անհայտ կորածների ընտանիքների մեծ մասը գոհ է ծրագրից և ցանկություն է հայտնել մասնակցել ՀԿԽԸ-ի` այս ոլորտում հետագայում ծրագրվող գործունեությանը:

of missing persons from these regions regularly contact with ARCS social workers and with chairmen of Regional Branches. ARCS's social workers visited 20 families of missing persons.

Using the Branches' opportunities, skills development activities were organized in all 4 regions. Events were organized in Shirak, Tavush, Lori and Armavir regions for families of missing persons. They were also directed to other organizations for support.

Buffet courses for families of missing persons in Shirak, Tavush, Lori and Armavir regions were organized and all the participants received certificates.

The majority of the families was satisfied with this program and expressed willingness to participate ARCS further activities in this sphere.

# ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ

# DISSEMINATION OF RED CROSS PRINCIPRS AND HUMANIYARIAN VALUES

## ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Կարմիր խաչի սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածման նպատակն է բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման պատմության, բաղկացուցիչների, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ), խորհրդանշանների գործածության և չարաշահման, Ազգային ընկերության (ԱԸ) գործունեության և առաքելության վերաբերյալ, ինչպես նաև ամրապնդել ԱԸ կապը լրատվամիջոցների հետ՝ աջակցելով Հայկական Կարմիր խաչ ընկերության (ՀԿԽԸ), որպես մարդասիրական ոլորտում կառավարությանն օժանդակ կազմակերպության, գործունեության ճիշտ ընկալմանն ու լուսաբանմանը:

ՀԿԽԸ սերտորեն համագործակցում է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ և վերջինիս ֆինանսավորմամբ իրականացնում «Լուսաբանում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում պարբերաբար լուսաբանումներ են իրականացվում տարբեր ուսումնական հաստատություններում, միջազգային և տեղական կազմակերպություններում, ներկայացնելով ՀԿԽԸ գործունեությունը:

Հաշվետու տարվա ընթացքում ԿԽ և ԿՄ միջազգային շարժման, ՀԿԽԸ գործունեության, ՄՄԻ և լրատվամիջոցների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման մասին կամավորների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են մի շարք դասընթացներ և քննարկումներ:

Մայիսի 8-ին՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրը, ՀՀ ամբողջ տարածքում իրականացվել են լայնածավալ լուսաբանման միջոցառումներ:

Երևանում, Պետական Կոնսերվատորիային հարող Կոմիտասի այգում ՀԿԽԸ-ն կազմակերպել էր իրազեկող միջոցառում, որտեղ բոլոր ուղղությունները ներկայացնում էին իրենց գործունեությունը՝ թեմատիկ տաղավարներում բաժանելով բուկլետներ ու թռուցիկներ, և իրականացնելով ցուցադրական վարժանքներ: Միջոցառումը լայնորեն լուսաբանվել է ԶԼՄ-ներով:

Տարվա ընթացքում ՀԿԽԸ-ն ակտիվորեն համագործակցել է ԶԼՄ-ների հետ՝ լրագրողներին հրավիրելով կազմակերպության համար նշանակալի իրադարձություններին: Լուսաբանման բաժինը հրատարակել է «ՀԿԽԸ 2011թ. տարեկան զեկույցը», ՀԿԽԸ գործունեությունը ներկայացնող տեղեկագրերը՝ հունվար-հունիս և հուլիս-դեկտեմբեր ամիսների կտրվածքով, տեղեկատվական նյութեր:

Ազգային ընկերության աշխատանքների առավել արդյունավետ ներկայացման համար թարմացվել է ինտերնետային կայքի դիզայնը, Ազգային ընկերությունը ներկայացված է նաև սոցիալական ցանցերում (Facebook, Twiiter):

Տարվա ընթացքում ՀՀ բոլոր մարզերում լուսաբանման աշխատանքներ են տարվել ավելի քան 10 000 մարդու համար և բաշխվել են շարժումը լուսաբանող ավելի քան 5000 տպագիր նյութեր:

## Information and Dissemination

